

Արձանագրություն թիվ 1

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2021թ սեպտեմբերի 13-ին

Օրակարգը՝

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի 2021-22 ուս.տարվա աշխատանքային պլանի քննարկում:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումները նոր ուսումնական տարում լաբորատորիաների պատրաստվածության վերաբերյալ, ինչպես նաև հաղորդում լաբորատոր
3. Ընթացիկ հարցեր:

1.Խորհրդի նախագահ Ս. Վ. Ղուչիկյան.

- Ներկայացնում այսօր մեր նիստում քննարկվող հարցերը:

Ֆակուլտետի խորհրդի 2020-2021 ուս.տարվա աշխատանքային պլանի նախագիծը բաժանված էր ամբիոնի վարիչներին գիտխորհրդի անդամներին, մանրամասն ծանոթանալու և անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կատարելու համար, Ձեր կողմից կատարված առաջարկները արդեն իսկ կատարվել են: Նշեմ, որ ասպրանտների և հայցորդների ատեստավորման համար հստակ ժամանակացույց չենք ֆիքսել, քանզի մեր հայցորդների և ասպիրանտների ընդունելության ժամանակահատվածները չեն համընկնում: Ատեստավորումները կիրականացնենք համապատասխան գիտխորհրդի նիստում:

- Գիտխորհրդի նախագահ Ս.Վ.Ղուչիկյան – Այսօր նաև թերի է գիտխորհրդի կազմը: Գիտխորհրդի ուսանողներից 3-ը ` Առաքելյանը Գոհարը, Եզանյան Տիգրանը և Խաչատրյան Վիկտորիան դիմում են ներկայացրել գիտխորհրդի կազմից դուրս գալու համար:

Ս.Վ.Ղուչիկյան – Ուխ. Նախագահ Ա. Նիգարյանին: Ինչպես է ընթանում ուխ-ի կազմի համալրման գործընթացը և արդյոք Բոլոր կուրսերն են մասնակցում ընտրություններին:

Ուխ. Նախագահ Ա. Նիգարյան – Ուխ-ի և ուգ-ի ընտրությունների չեն մասնակցում առաջին կուրսեցիները, իսկ մնացած կուրսերը տեղեկացված են ` հայտարարությունը փակցված է:

2. Պրոֆեսոր-Ս.Վ.Ղուչիկյան

Օրակարգի երկրորդ հարցը վերաբերվում է ամբիոններում լաբորատորիաների պատրաստվածությանը: Ամբիոնի վարիչները ներկայացնեն խնդիրները, եթե այսդպիսիք կան

Անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ- Ա.Բ.Մարտիրյան: Մեր ամբիոնը պատրաստ է ուսումնական պրոցեսին և խնդիրներ չունենք:

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ- Ն.Ա.Դուրգարյան: Հիմնականում պատրաստ ենք, ապահովված ենք լուծիչներով և ռեակտիվներով: Միակ խնդիրը ապակեղենն է, որը ընթացքում կկարգավորվի: Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ- Շ.Ա.Սարգսյան: Մեզ մոտ ամեն ինչ կարգավորված է:

Տ.Վ.Ղուչիկյան – Ըստ էության ֆակուլտետը պատրաստ է լաբորատոր աշխատանքների իրականացմանը: Ձեր բարձրացրած հարցերը տեխնիկական բնույթ ունեն և պետք է սպասել:

3. Ընթացիկ հարցեր-

Ընթացիկ հարցերի մեջ քննարկվելու ենք անվանական կրթաթոշակ նշանակելու հարցը գիտխորհուրդը միաձայն որոշեց

Որոշեցին - - ա/ Նշանակել «Քիմիա» բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի գերազանց առաջադիմությամբ ուսանող Վլադիմիր Վահանի Վարդապետյանին "Ստեփան Ղամբարյանի" անվան կրթաթոշակը:

բ/ Նշանակել «Մանրի անվտանգություն» բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի գերազանց առաջադիմությամբ ուսանողուհի Դիանա Արտակի Փինաչյանին "Աիդա Ավետիսյանի" անվան կրթաթոշակը:

գ/ Շարունակել «Քիմիա» բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի գերազանց առաջադիմությամբ ուսանող Տիգրան Հայկի Եգանյանի "Նազելի Չարչյանի" անվան կրթաթոշակը

Խորհրդի նախագահ

քիմ.գիտ. դոկտոր., պրոֆեսոր

Տ.Վ. Ղուչիկյան

Խորհրդի գիտ. քարտուղար

քիմ. գիտ.թեկնածու դոցենտ

Մ.Ա.Սամվելյան